

մեծաշուք սաստիճաններ եկան, զարդարե-
ցին անձնուէր կործարելու ու ազգանուէր ի-
րանները ինչպէս կը զարդարեն վաճառա-
տուններու փայտիքները՝ ապրանքին
բշտու համար, այո՛, զարդարեցին այդ
կործարելու պատրիարքէն սկսեալ մինչև
յետին բարապանին ու նուիրագործեցին ի-
րանները Բաղաբալան Ժողովոյ վաճառուք-
ներէն սկսեալ մինչև Մարիոս կամ Կերա-
կոս Աղբոր՝ որոնք Պատրիարքարանի մէջ
պաշտօն ունին կամ դռնապանութեան,
կամ սրճարարութեան:

Կայսերական հնչուն ու փայլուն դը-
րամներու նուիրագործութիւններ ալ ո՛չ նը-
ուազ բերկեցուցին սիրտերը անոնց՝ որ
ազգային անտուկին թափուր վիճակէն ըս-
տիպաբարձր գրամական տագնապի մատնե-
րուած էին:

Այս փառայեղութիւնները միմայն ազ-
գային պատրիարքարանի շուրջը չէր որ կը
ծառայէին: Պատրիարքարանէն հեռու, գա-
ւառներու մէջ ալ ունեցան իրենց ազգե-
ցութիւնները:

Օրմանեան Պատրիարքի ինկարկու Ա-
ռաջնորդներ կայսերական շնորհներու ար-
ժանացան՝ ի տրիտուր իրենց անձնուէր ծա-
ռայութեանց, եպիսկոպոսական բարձր աս-
տիճանին արժանացան՝ ի վարձ իրենց անձ-
նուիրագործութեանցը Ազգի եւ եկեղեցւոյ սի-
րոյն համար:

Հայրապետական, եպիսկոպոսական,
վարդապետական հեռագիրներ Մ. Էջմիած-
նէն՝ տեղատարափ թափեցան Պատրիարքա-
րան Չամչեան ու Կերպարանի Եղեմեայի գո-
պր՝ աւետարանելով անզուգական Վանքեան
վարդապետի Ամասիոյ Առաջնորդին. յե-
պիսկոպոսութիւն բարձրացումը որուն նկա-
րագիրը Պրուսացիները պէտք է տան... Բը-
սենք թէ ո՛չ նուազ և Սուրբն Էջմիածին
լուկ միջին հետեւը մը եղած է ազգային
պատրիարքարանի քաղաքականութեան —
Ce qui est certain, c'est que le monde
est de travers — Տէր Սահակ վարդապետ
Բագրևանդեան՝ Վանայ Պատր. փոխանոր-
դը, ժամանակին ընդ հակոցութեամբ Կ. Պո-
լիս բերուած կառավարութեան կողմէ ու
Չամչեան Էջմիածին Տեղապահութեան օրով
աքսորէ ազատուած, որ հիմայ իբրև անձա-
րակ մարզ է անկարող պաշտօնեայ, իր գա-
ւառի բոլոր ժողովրդոց դանդաղներուն ա-
ռարկան դարձած է, այն ալ եպիսկոպոսա-
ցաւ... Ինչպէ՛ս արդեօք... ո՛վ է այդ մար-
դը, առաջնորդ — ո՛չ. անշուշտ, վասնզի
Վանայ համար յԱնձին Գործան Եպիսկո-
պոսի Առաջնորդը մը կը փոխուուի կոր...
Ապա ուրեմն ինչպէ՛ս եպիսկոպոս կը ձեռ-

նագրուի Տ. Սահակ վարդապետ, իր անզու-
գական մէկ հանդամանքին համար... և
սակայն, թո՛ղ թէ այդ անզուգական հան-
համանքները դարուս և ո՛չ մէկ եկեղեցու-
կանին տրուած են, եպիսկոպոսութիւնը
վարձատրութիւն ըլլալէ շատ հեռու շնորհ
մըն է, զոր պիտի վախեն անոնք միայն՝
որ յԱռաջնորդութիւն ժողովրդեան կող-
ուած՝ ժողովրդին ընդհանուրին համարան-
քը վայելած, անոր վկայութիւնը ստացած
և ընդհանուր ազգի եկեղեցական նուիրա-
պետութենէ վկայուած են: Անոնք՝ արդեօք
և կը վայելէ՞ Սահակ վարդապետ այս հան-
գամանքը... տեսնողները Աստուծոյ հա-
մար թո՛ղ վկայեն ու մենք մեր խօսքը ետ
կառնենք: Ապա ուրեմն ի՞նչ իրաւամբ ե-
պիսկոպոս կը ձեռնադրուի, — այն իրա-
ւամբ որ՝ ուրիշ այս կարգի անիրաւ ձեռ-
նարկներու ալ՝ որ այժմէն սարքուած են՝
իրաւունք տրուի և քննադատութեանց ա-
ռիթ չ'ըլլան:

Ահա՛ ասոնք ամէնքը, յարգելի՛ ըն-
թեցող, և ատնցմէ զատ դեռ շատ ուրիշ-
ներ՝ զորս մի առ մի թուել աւելորդ կը
համարիմ, այն փառահեղութիւններն են զոր-
քիչ առաջ յայտնեցի և, ի հարկէ ի՞նչ գե-
րազանց փառահեղուն քան զոր Հայ Ազգը
կը վայելէ այսօր տեսնելով իր Պատրիար-
քը այնքան սիրելի, այնքան համակրելի
յայտ կայս: Վեհափառութեան, պերճախօս
իր քարոզներով, յայլ՝ իր իրանով, մեծա-
դոյ իր ձայնով և... և յարմարող ըստ
ամենայնի:

Իայց այս ամէն փառահեղութեանց
հանդէպ ուր մնաց կիլիկիոյ Կաթողիկոսու-
թեան խնդիրը, ուր մնաց Տաճկաստանի Հա-
յերուն պահպանութիւնը, կամ, դէ՞ թէ առև-
տրական գործերու համար՝ այն կամ այն
տեղ երթալու ազատութիւնը, ուր մնաց
գաւառներու մէջ հարստահարութեանց զա-
ղարուժը, բանտարկեալներու, աքսորեալ-
ներու փրկութիւնը, ուր մնացին ազգային
այլևայլ կենտրոններ ինքիւնները, օրինակի
համար ի Տէր հանտեղեցեալ Սահման սրբու-
թեան վերաքննութիւնը, Բաղաբալան Ժո-
ղովոյ որ հակառակ օրինաց, եօթը տարիէ
կ'վեր պաշտօն կը վարէ, օրինաց համաձայն
վերաքննութիւնը, ուր մնաց, օրինակի հա-
մար, Աղձնատարայ Կաթողիկոսական ընտ-
րութիւնն ալ... ուր մնացին, ուր, ընթեր-
ցողք, ո՛չ ապաքէն ասոնք ամէնքն ցնորք-
ներու կարգն անցած են... ո՛չ ապաքէն
այս արդար մտածութիւններն են որ կու-
ղան սե ըստ մը քաշէլ Օրմանեանի փը-
րուուայ լամբը զարդարող աղանակու Օւ-
մանի ինչի մը և ըսել թէ նոյն իսկ այդ
նշանը՝ այդ Օրմանեանի իր պաշտօնի անտ-

ղըք դատապարտութիւնն է՝ պաշտօնին՝ որ
յանուն Ազգին՝ ազգային գործոց բարեխա-
ման համար ստանձնած է և ո՛չ իր փորը
մեծցնելու, կործարելու փառաւորելու և բը-
սակը պարարտացնելու համար:

Տահկաստանի Հայոց վիճակը՝ ի գաւա-
ռըս, անտանելի դարձած է: Առաջին հա-
րստահարութիւններէն՝ սրունց համար ժա-
մանակ մը այնքան աշխուրժ գանդատներ
կ'ըլլային, բերրապատիկ աւելի սաստկացած
են բրդական ու թրքական բռնութիւննե-
րը, սպաննութեանց, առևանգութեանց, ա-
ւարառութեանց շարժումն անձան չի կայ և
աւելի դէ՞ չի այն է որ՝ սերագործ է այն՝
որ կը բողբէ, ազգատեաց է այն՝ որ իր
ցաւերը Պատրիարքարանի կը պարզէ՝ դար-
ման մը, միջիթարութիւն մը գտնելու հա-
մար: Երբող Պատրիարքարանի անհատարտի և
գաւառան մըն է, վերապէս, այն՝ որ եղած
զրկանաց և անիրաւութեանց դէմ արգար-
բողք կը բառնայ... ո՛չ, այս կերպ բու-
ղբներ պէտք է՝ որ ըլլան, ընդհակառա-
կըն, ամէն զրկանք, լլկանք, անիրաւութիւն
կրելէ ետքը շնորհակալութիւն յայտնելու
և վասն կենաց Օգոստ: Սուլթանին և Ն. Սրբազնութեան արթնելու է, զոհոնադու-
թեան ուղիքները մատուցանելու է՝ որպէս
զի... Օրմանեանի կործար ականակուածե-
րով շքազարդուի, որպէսզի՛ Հայոց Պատրի-
արքին քակը պարարի, որպէսզի՛ Ն. Սրբ-
ազնութիւնը իր հանդիստ ճան ընէ Բերա-
յի մէջ...:

Ինչ՞ զճ կիլիկիցիք, իրենց ազգութեան
երեսէն, դեռ կը տանջուին ու պիտի տան-
ջուին յաւիտեան՝ սպասելով որ Կաթողիկոս
մը պիտի ընտրուի իրենց... Թո՛ղ սպասեն
սրբան որ կ'ուզեն... մինչև որ Օրմանեան
ինքը չ'ըլլայ կաթողիկոս, ուրիշ կաթողիկոս
չի կայ իրենց համար: Գործն որ համաձայ-
նեցան նախորդ ընտրութեան ատեն Օրման-
եանի գաւառն խապանանի գլխուն Բիւ-
շննի՝ որ հարցնելու համար, թո՛ղ համաձայ-
նին Օրմանեանի այս փափաքին ալ և իսօք
տան՝ — սակայն սուսան քիւլա՛ հարցնելու
— զինքն իրենց Կաթողիկոս ընտրելու, և
ան՝ ամէն բան հարթուած կ'ըլլայ...:

Չենք խօսիլ Հայ ո՛ր և է անհատի մը
ուղևորութեան մասին յարնցում անշուր
դժուարութիւններուն, բան մը զոր ամէն
մարդ զիտէ, բայց չենք կրնալ լուել խել
մը անմեղ քանտարկեալներու և քարտեալ-
ներու մասին՝ որոնց համար թի՛ք և ակնարկ
մը ընել կառավարական Պաշտօնէից կամ
ձեռնհաս Իշխանութեանց առջև՝ մահացու
մեղք է Օրմանեանի Ամենապատուութեա-
նը...:

Ուրեմն, յարելի ընթերցողք, դուք
գտնեցէ՛ք, ի՞նչ բանք իր շուրջը գարձող
վերայիշեալ փառահեղութեանց, որո՞վ ա-
ռախալ առաջիցմոյ զնա, — Effronterie,
եթէ կը հասի...:

MEROWIG

ԽՈՆԱՐԶ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ

Առ Արամ

Արշալոյս յի մէջ ուրախութեամբ կար-
գացի՝ թէ այն քսան սուկոյ գումարը, ու-
րուն՝ երկայն ժամանակէ ի վեր Աղքատա-
խնամին նախկին գտնապետին քով վար
դրուած ըլլալը ի լրոյ՝ ծանուցած էի իմ
անցած լինարէն Կարծիքներս, ուս միայն
մէջ, ամբողջապէս վճարուած է յիշեալ ըն-
կերութեան այժմեայ Գործ. Ժողովին: Այս
առթիւ որտաղին կը շնորհաւորեմ երկու
կողմն ալ: Կնճիւր մ'էր որ մերցաւ մէջտե-
ղէն. մանաւանդ այնպիսի ժամանակ մը,
ս'ըր կնճիւններէն ստեղ ձգելու տեղ չ'կայ
առաջնորդարանի Ժողովարարներուն մէջ:
Ասոր — ըստ Կարապետ Փանոսեանի — չի-
յիկի պարտաւորեալ մէկ ապացոյցն է եղելու-
թիւն մը, որ մոռնուց տուաւ հետեւեալ նա-
մակին, ատենէ մը ի վեր խրկուած և հա-
սած իր հասցէին:

ՊԱՏՃԷՆ ՆԱՄԱԿԻՆ

Գահիրէ 10 Յունիս 1902

Արժանապատիւ

Տէր Մամբրէ Հայր

Փոխ-Նախագահ Ազգ. Գաւառ. Ժողովոյ

Գահիրէի Աստ

Արժանապատիւ Տէր Հայր

Ձեր Արժանապատուութեան քաջ ծանօթ
խոցոյ մ'տոթիւր — Տիկին... ի խնդրէր — ամ-
սոյ Յին, ուրախ իր կիսուն, անձամբ ներկայա-
ցայ Աղքատաց Պատ. Հոգաբարձութեան սեն-
եակը. փոքր ինչ բացայայտ պատասխան մե-
նելու: Նպատակաւ: Տէրաք Հոգաբարձուք, ու-
րոնցով նախապէս ունկնդրութիւն մը խնդրած
էի անձի մը յիշողութիւն, որ հոն կը գտնուէր Բա-
ճեցան զիս ընտրուելու իրենց ներկայութեան:
Սրբաճեքս մտալ, Հոգաբարձութեանը կազ-
մող երկը անձնաւորութիւններէն մին, որ թե-
րեւս ատնապետն է, իր ընկերներուն հար-
ցուց. Գրաստեղէն լեզուով թէ թուրքերէն լաւ
կը հասկնան, Արոնցով առած հաստատական
պատասխանին վրայ ինձ դարձաւ եւ հարցուց.
— Ե՞՞ իսթէքնիւրի:

ԹԵՐԹՈՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ

ԵՐԿՈՒ ՀՍՊՐՈՅՐՆԵՐ

Թժուրկ զարնելով փողեր հնչեցնելով զօ-
րագուղը՝ դէպի Արգաս յառաջացող կանանչա-
գարդ լեռնազապաթներուն մէջ Բիմարբուրի
գիւղը մտաւ: Ամէն մարդ զնա յոյսի, ուրախու-
թեան, յաղթական և նինչու պիտիտաս խանդա-
վառութիւններու մէջ էր՝ որոնց աւա՞ղ այնքան
չուս պիտի յաջողէին ստակալի պատրանք ու
անհասար կուր՝ յաճախ մէկը ասանի զէմ,
սքանչելի արիւթ թիւնն ալ սակայն պատուութեան
պրծելու համար անբաւական էր:

Յրանացել զինտըր կը յառաջանար Լօրէ-
նի հողին վրայ, անփոյթ ու զուարթ, հրացա-
նին բերանը ծաղիկ մը խօթած, աշխոյժ քալ-
ուացքով և աստի ստեն խեղկատակութիւններ
քննելով ճամբան:

Գիւղացիք գլխավորին կը հանէին դը-
շակներուն առջև, աղաքները սրունքներն բա-
ցած զօրախմբին հետեւելու՝ փորձեր կ'ընէին իսկ
աղբիկները պատուհաններէն կարծուած համեստօ-
րէն կ'ընդունէին զինտըրներու կողմէ իրենց
ուղղուած բարեւունքն ու քննադատութիւնները:
Հայրենասիրական պարտականութիւն մը կը սե-
պէին ներողամիտ ու քաղցրաբար զանուիլ
մեռնելու: Գացողներուն հանգչայ:

Բիմարբուրի գիւղը տօնական երեւոյթի մը
առած էր, անհամար ձեռքեր դէպի զինտըրները
կ'երկնային որոնք թիւն փոշիին մէջ թաթխը-
րած սակայն յոգնած չէին երեսէր:

Չօրախուժը կանց տուաւ եկեղեցւոյ հրա-
պարակին վրայ, պէտք էր հոն մնալ մինչև նոր
հրամանի մը գալը: Բայց քանի՞ օր. քանի՞ ժամ.
զոդապետն իսկ չէր գտնու: Գիւղին բնակիչնե-
րը իրարու հետ կը վիճարանէին զօրքերը հիւ-
րանիւրու մասին, անոնք լու բնակարաններ
իր տանէին, աղիտարար կը զինտըրներն ու ջեր-
մագին ցոյցեր կ'ընէին անոնց:

Երբ զինտըրները ցրուեցան աղին անգին՝
մնացին սպաններ որոնք իրենց կարգին ստացան
ընկույթներն ստանալներ ու իրենց պիտի վեր-
ջին հրամանները ստանալէ յետոյ ամէն մարդ
զնաց իր բնակարանը փնտռելու:

— Կարնաք ցուցնել ինձի Մ. Մարուաի տու-
նը, հարցուց խարտաշինքն ու դիտարկ տեղակալ
մը՝ ձերուկ գիւղացիի մը որ այդ միջոցին ձեռ-
քերը կտակած իրեն կը նայէր:

— Տեղակալի՞ իմ — պատասխանեց ձերու-
նին պղտիկ ծամածուութիւն մը ընելով՝ — գէշ
տեղ չեք ինչպէս. Մ. Մարուա՛ գիւղէն զուր քիչ
մը հեռու կը բնակի յակայն, անոր սուներ զիւ-
ղին ամենուրեւ տուներէն մէկն է ինչպէս որ ին-
քը երկրին լաւագոյն մտրոցմէն մէկը:

— Կը զարմանամ թէ ինչո՞ւ հոս չեմ տեսներ
զինտը. ինչ եւ է եթէ կ'ուզէք կ'առաջնորդեմ
ձե՛զ:

Ճամբան ելածուն պէս գիւղացին շտոր-
նակեց. — Ասիկ զատ՝ զոս՝ զոս պիտի տեսնէք օրի-
որք Ռօզը՝ Բիմարբուրի եւ չրփակներուն ամե-
նասիրուն, աղնուարդն, ամենաքաղցրիկ, ամե-
նապատուար աղիկը, թանկագին և ճշմարիտ
ժարգաբու մը: Ո՛հ, կ'ընամ բռն թէ Մ. Մա-
րուան բարեբախտ և այնպիսի քեռորի մը ու-
նենալուն՝ իսկ գոթք, տեղակալը իմ, այժմէն եր-

ջանիկ պէտք է ըլլաք անոր նման հիւրընկալ
մը ունենալուց համար. սակայն չ'ըլլայ որ սի-
րահարուիք անոր... որովհետեւ լաւ բան չէ.
պատերազմի երթալու տուն Ռօզ՝ Պրոնտու ա-
զարակատրոյ որդուց ժող Ռօզթըրուի նը-
շանուած է. սա անոնց աղաքակը կը տեսնը-
ուի ձախ կողմերնից կնճիւններու շարքին ետեւ:»

Շատախօս ծերունին՝ սպայի մը հետ քիթ
քիթի խօսակցելէն վերջին ծայր ուրախ, աղէկ
մը զուրս թափեց իր գիտցածները Մարուա ձե-
թթըրու գերպատանին վրայօք:

Տեղակալը հասկցաւ Պրոնտու ազարակին
արժէքը: Ռօզին անհամար գովելի յատկութիւն-
ները, ժող-ձեթթթըրուի պատրաստելի ընթաց-
քը ու ամենուն զարմանքը այս անյարմար ա-
մուսնութեան ատիւր որ պիտի տեսի ունենալ
քիչ ատենէն:

— Ամէն մարդ — շարունակեց խօսել ծե-
րունին — կ'ընէ թէ կատարած չուն մը պիտի
կարգուի սպիտակ անմեղ գառնուկի մը հետ.
Թէ՛ մէկ պատասով պիտի կլլէ դայն, խեղճ աղ-
ջիկ մը որ գաշտուրու ծաղիկն պէս փափուկ է, որ
վարդի մը կը նմանի եւ որուն անունը կը կրէ
արգէն, իսկ միւսը՝ թանձրամիտ կոպուս մը, ան-
կիրթ սրիկայ մը: Եթէ բան մը կայ, այն ալ
գրամ ունենալն է ու Մ. Մարուա՛ Ռօզին մօ-
րեղբայրը ամենէն աւելի գրամը կը սիրէ. ասոր
հետ մէկտեղ պէտք է յայտարարել իրեն թէ գա-
ւառին մէջ քաջարի և բարեկիրթ երիտասարդ-
ներ չեն պիտի որ սոյ ծայրին պէտք է լու մը
խորհիլ իր քեռորիցի կ'ամուսնացնել առաջ:
Վերջապէս իրեն գիտնալիք բանն է այդ. ի՞նչ
պէտք է ուրիշներու գործին խանութիւն ու ա-
նոնց մասին գիտողութիւն ընել, երկտղանք

թէ ձեզի բան մը չեմ՝ ըսած է — Ներտասարգ
սպան մեծ ճամբով ու հետաքրքրութեամբ մը-
տիկ կ'ընէր ծերունիին ըսածները, ծայր աստե-
հան համակրութիւն մը կ'զգար Ռօզին՝ զորուե-
լու յատկացուած այդ խեղճ էակին նկատմամբ,
զոր զնա չէր տեսած ու ճանցած երբէք:

Իր նկատմանը մտքին մէջ սպիտակաւ
վէպերու գէպերի, տեսիլներ կ'ալեծ բովելէն
ուր ինք՝ պիտի ստանձնէր հին դարերու թա-
փառելի ստեղծող մը դերը, ազատելով իր ճամ-
բուն վրայ հանդիպող գեռատի յղեկալները ու-
րոնք մտքէ պատրաստութեան մէջ վար գրեւած ու-
նի կաշկանդուած կը մտայնէ:

Ռօզին նախաձեռն ըլլալով ժող-ձեթթթըրու-
ղղուելի արարած մը կ'երեսէր իր աչքին եւ կ-
թէ հանդիպէր անոր՝ դայն երկուք պիտի ճեղ-
քէր անմիջապէս, իր տակաւին կոյս թուրովը:
Սպայն տեսակ տեսակ կրեւակայութիւններու մէջ
թողուած էր, երբ ձերուկ առաջնորդը իրեն վա-
ղապարհը որ կը գոցէր Մ. Մարուաի սեփակա-
նութիւնը, անոր սիրտը այնպէս տրոփել սկսաւ
որ կարծես թէ Ռօզին՝ անձանօթ գեղանի այն
օրիորդին սիրահարուած ըլլաւ:

Ժող-աղ-Բրէ՛լլիլ ազոր անունն ալ ժող
սիրուն աղայ մըն էր, սիրուն ամէն կերպով.
Նախ զեղեցիկ երիտասարդ մըն էր ու տակաւին
ստեղծակալ նուրբ գիմարդի: Ունէր բայց պա-
տերազմի մէջ եւ Օրոտոսի արեւը ուսելէ՛ յե-
տոյ անոր վարդապոյն մորթը անակալան գոյն
մը պիտի ստանար անշուշտ:

Թարգ. ՀԱՅ ԳԵՂԱՆԻ

(Շարունակելի)

ՄԻՋՈՆ ԲԻՋԱ ԵՒ ՊԼԱՆ
ՆՈՐԱՀԱՏԱՏ ԳՈՐԾԱՐԱՆ ՄՈՐԹԵՂԻԱՅ Ի ՅՈՒՊՐԱ

Գործարանատէրք պատիւ ունին ծանուցանել ըստ մորթի եւ կաշիի վաճառականներուն, կոշիկարներուն, կահաւորարաններուն եւ մուշտակագործներուն թէ՛ իրենց Շուկայի Հասան փաշայ Գաւիթ թաղը զանազան հաստատութեան մէջ կը պատրաստեն եւրոպական ամէն գոյն եւ ամէն տեսակ մորթի վերաբերեալ ապրանքներ, կոշիկի, մարտիկի, կարասեցի եւ աթոռներու համար:

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՆՈՒԹԻՒՆ

ՇՈՒԿԵՐՈՒԹ ԳՈՐԾԱՐԱՆ ԵՒ ԳՐԱՍԵՆՆԱԿ
ԳԱՆԱՐԱՆ (Խաղախորդարան)
Շուկայ, Հասան քաշա զաւիթ թաղ
Հին Գանձարի ի Մասապիկ

ՍՈՒՐԻ ԳՈՐԾՐ. — Երկէ երեկոյ Առաջ- նորդարանի Բեարիսը Եղապէթ, ո՛վ գիտէ կիմն ինչ աշխարհ ունի... Արարկերցիներէն սմանք իր տունը հաւաքելով խորհրդազակցած է Ս. Գործի մը վրայ. հանգուցեալ Տէր Եղիկ Բահանային յաջորդ մը պիտի ընտրեն եղբւր Արարկերցիները... Ինչ մեծ մենաշնորհ է այս որ Արարկերցիներուն կը տրուի...:

Գլուխ թէ որոշած են որ հանրագիր մը պատրաստեն, որով պիտի պահանջեն որ Տէր Եղիկ Բահանային յաջորդ օժակիցը Տէր Յուսիկ Բահանային, գահաճրճելու Արարկերցիներուն, ու եթէ կ'ուզէր ուրիշ տեղացիներու ալ՝ տաներէցը ըլլայ:

Ընտրութեան արգելքը մեզ չի հետաքրքրել. և կրնանք ըսել՝ անարժան ընտրութիւն մ'ալ չէ. բայց ինչ կայ որ այս ինքորոյն մէջ ալ նազարէթ օրհանար չորս մեզ կամ չորս ոտք ելած է. բան մը որ մեզ կրնայ չտարբերել, այդ մարդուկին այսպիսի իրարանցումն է. Ինչո՞ւ Գահիրէի Ս. Աստուածածին եկեղեցւոյն վրայ ուղղակի քահանայ մը չի ձեռնադրուիր ու ասգիտն անգիտն փոխառութիւններով հաշիւներ կարգադրել կ'ուզուի մանկացածներու պէտք. առթիւ մը Արշալոյս ի մէջ ըսուած է որ այս պահուստը քահանայներէն միանգամ ընդ միշտ ազատուու է մեր օճիքը, որովհետեւ անոնք ուզեն չ'ուզեն մէկուս ու միւսին ձեռք գործիք դառնալու պարտաւոր պիտի համարին ինքզինքնին ու այնպէս ընեն... Թողունք որ և է քահանայի պանդխտութիւնն ալ ներքին չէ ըստ հայ եկեղեցւոյ օրինաց:

ԱՐՏԱՐՈՒԹ

Աղեքսանդրիոյ և Տրէպիզի միթիկի ինչ որոշումին համակերպելով, Տիար Լեւոն Մըկրտչեան յառաջիկայ կիրակի Բօր-Այլետի ճամբով նարօրի կ'ուղևորի:
Ըրին չ'ըրին Մարդը իսխալոյցիկ:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԹԱԳԱԴՈՒԹԻՒՆԸ ՅԵՏԱԶԳՈՒՄ. — Գահիրէի անգլիական հիւպատոսարանը հեռու եւ հեռագրերը ընդունեց Լորտ Լանտոմանունէն:

Լանտոն 24 Յունիս. — Խորին վիշտուունիմ ձեզի հաղորդելու թէ թագաւորը perityphlite է կը տառապի որով հետեանքով վերաբուժական գործողութիւն մը կատարուած է և թագաւորութիւնը և ուրիշ հանդէսներ յետաձգուած են յանսահման: Գործողութիւնը անհնամեծ յաջողութեամբ կատարուած է Ն. Վ. առողջութեան վրայ հրատարակուած տեղեկագիրները գոհացուցիչ են:

Այս հեռագիրին վրայ թէ Աղեքսանդրիա և թէ Գահիրէ կատարուելիք բոլոր հանդէսները յետաձգուած են:

ՄԵՆՍԱՎԻ ԲԱՅԵՆ. — Հիւզարթի 26 Յունիսին Մէնսապի բաշա որ իր բանտարկութիւնը լրացուցած էր ազատ արձակուեցաւ: Խուռն բազմութիւն մը Մէնսապիի

— Իրերքէ մի՞ գօնուցանա՞րդ:
— Եվ ի՞նչ:
Հազիւ բերանս բացի, եւ անա կանաւաւոր հարցաբնութեան մը ինքնարկուեցայ, եւ՝ առանց ժամանակ տրուելու որ միտքս պարզեմ՝ ունկնդրութիւնը վերջացաւ աստիճանաւ պէջին հետեւեալ խօսքերով:

— Օն պէջ կրնն սօնրա կէլսին պագալըմ:
Ճիշտն ըսելու համար հարցաբնութիւնը անտեղի չ'գտայ, կարտեալներու հաց բաշխող անձինք օրինաւորապէս իրաւունք ունին գիտնալու թէ անձանթ մը ինչ ինչ անուանութեամբ ձեռնամուկ կ'ըլլայ երրորդի մը գործին: Պէտք է ուշադիր ըլլալ որ աղքատներուն նուիրուած գումարը այլամերժաբար իր նպատակին գործածուի: Բայց միւս կողմէն ալ խնդրարկուին պէտք է ժամանակ տալ խօսելու, սա պարզ պատճառով որ հոն գացողը անշուշտ ըսելիք մը ունի:

Սակայն կը թողում այս տարրական կէտը եւ՝ առթիւն օգտուելով՝ ձեր Արժանապատուութեան մարդասիրական զգացումներուն կը յանձնարարեմ հետեւեալ մի քանի գիտողութիւններ:

1. Աղքատաց հոգաբարձութիւնը կազմող երեք մեծաշաղկապ անձնաւորութեանց ֆրանսիէն եւ թուրքիէն լեզուներու մէջ յաջողակութիւններն ամէն գովելու վեր է. եւ արարեալներ արդէն իրենց մայրենի լեզուն է: Թերեւս ուրիշ մի քանի լեզուներու մէջ ալ պատուէր մը ցանկանի որ ստացած են: Անոնց լեզուագիտութիւնը կրնայ ամէն ուրիշ լեզուէն իրենց թէ՛ ազգին պատուաբեր եւ նպատուար ըլլալ. սակայն խիստ կը տարակուսիմ որ՝ հոն՝ Հոգաբարձութեան սեղանին առջեւ եւ աթոռներուն վրայ օգտակար հանգամանք մը ունենայ մեր աղքատներուն համար: Արդարեւ, եթէ ձեռնարկ է որ լեզուն է միակ միջոց վիճակ յայտնելու եւ սիրաշարժելու, կամայ նպաստ պարտինք խոստովանել որ՝ ի նշիքի նպաստի Հոգաբարձութեան գիտողներէն մեր եզրիպատի արարեալներ եղբայրներն ու քոյրերը մեծ առաւելութիւն ունին գաղթականաց վրայ, որոնք մեծամասնութիւնը կազմող բնաշխարհի մեր քոյրերը զուրկ են այդ միջոցէն, չ'ըլլալով լեզուագետ եւ ըլլալով սրբազան նոյն իսկ թուրքերէնի մէջ: Հետեւաբար պարտինք ընդունել որ մեր մայրենի լեզուն, մեր եկեղեցւոյն բակին մէջ, մեր վարիչներուն անօրինութեամբ՝ մեր քուր հասկնալու հակաբնապէս անկարող ուսուի մեծապար հոնգամանք մը կ'ստանայ:

2. Ինչպէս վերին ըսի, ձեր արժանապատուութեան ալ բաշ ծանօթ է խնդիրը տիկին... Ի, որուն — կը յանձն թէ — խոստովանանքին էք տարիներէ ի վեր. խնդիր, որուն ըստ կարեւորէր վաղ լուծման համար ձեր արժանապատուութեան ալ, կարծեմ, հաճած է բարիխօսել հոգաբարձութեան ըով: Արդ, հակառակ ձեր իսկ միջամտութեան եւ հակառակ տիկնոջ մէկուկէս ամիս երթեկուկութեան, անա ասանդիկ օրուայ յետաձգելով մը եւս: Ինչո՞ւ առջեւ դանդաղութիւնն կ'ընդունեմ որ Պատ. Հոգաբարձութեանը չ'կրնար եւ պէտք չ'է որ օրին գոհացնել աւելն իրեն գիտողները, առանց հարկաւոր քննութիւնները կատարելու: Յիշեալ մարմնոյն պարտաւորութիւնն է, գոր օրինակ զանազանի արհեստով մուրաքիլը, խաղաղը, գինեմուրը, իրապէս անանկէն. կարողը՝ անկարողէն. առողջը՝ հիւանդէն. խաղաղը՝ զոհէն՝ հայտնու Ստորին օտարաբարբառ հայէն. մանաւանդ յանձնարարութիւններուն մասին արթուն եւ աշխուրջ ըլլալ, եւս: Բայց միթէ անկարելի՞ է մի քիչ աւելի արագ շարժիլ: Եւ յիշեալ տիկնոջ խնդրոյն մէջ, միթէ ձեր արժանապատուութեան — որ անձնօթ մը չէ — վկայութիւնը բաւական չ'էր կրնար նկատուիլ Տիարը Հոգաբարձուաց բերեկ վճարական Այո՞ մը կամ Ո՛չ մը, եղբցի՛ մը կամ Նի՛, եղբցի՛ մը արտաբերելու համար: « Պագալըմ », ինչ բանի: « Պագալըմ » ներք մեզի կը յիշեցնեն երկիր մը, ուրիշ մեզք զմեզ լուսական հետեացած կը կարծէինք: Սիւլաւձ ենք արիւթք, թէ կարիպտոսէն Սկիլլա ինկանք:

Թող ձեր արժանապատուութիւնը երեւակայէ նորեկ մը, որ՝ իբր նաւաբեկեալ ինքզինքը կը նետէ քաղաքին մէջ, ո՛ւր ոչ զոք կը ճանչնայ եւ ո՛չ ումեք ծանօթ է, եւ թող նաեւ հաճի հաշուել թէ այն անձը քանի՞ ամիսներէ յետոյ կարող պիտի ըլլայ Պատ. Հոգաբարձութեան նպատակին արժանապատու:

Տեսողներ կան որ՝ մտաւորապէս երեք շաբաթ առաջ՝ կէս անդամալոյծ, կամախցացած, սպիտակահեր, մեղմախիպ ձերուկի մը, առանց ամենախորք օգնութիւն մը ստանալու հետեացած է փոխելով: Արժանահաւատ սկանաւտն մը կը հաստատէ որ տասնութէ վաղիկէն հազիւ ինչոյցած է այն տասնընիցի չափ տատիկները, որոնք աղքատաց նպատակաւ մարմնոյն փողովատեղին կը տանին: Ինչ եղաւ այն արեւեր հայր, ո՛վ փնտրեց, ո՛վ շահագործուեցաւ այն կիսամիտ անձով: Ինչո՞ւ հացի գրամ մը չ'զննել այնպիսիներուն ձեռքը, սպաւնով որ հոգաբար-

ձուական անվերջ քննութիւններն ի գրուելու կրնն: Միթէ կը կարծուի՞ որ հիւարդութիւնը եւ ցաւը, քաղցը եւ ծարաւը պագալըմ ինչ չափ դիւրատար են եւ խարտուիկ: Ո՛վ կրնայ պիղի թէ Գահիրէի Հայոթիւնը, իր այս ընթացքով, աղքատաց կապարարին կամքը կը յարգէ կոր:

Արժանապատու էր հայր, նպատակաւ խոթելու բարոյականի պահպանման ամենամեծ աստարն է: Արդ, այն եղբայրներն մէջ որ ընտանեաց մայրեր եւ հայրեր, հինգ, վեց եւ աւելի զաւակներուն բեռին տակ ընկած, տան մէջ ամէն ինչ ծախելէն ծախսելէն ետքը, ճարտասամ եւ անաղիլ ամօթէ մը կիսամիտ երբ Աղքատաց Պատ. Հոգաբարձութեան կը գիտնէ եւ հոն ալ անվերջ ձգտումներու կ'ենթարկուին, այդ եղբայրներն մէջ պարտաճանաչութեան, քրիստոնէական ոգոյ, բարոյականի, հայրութեան եւ մայրութեան մահացուցումէն զատ ինչ կարելի է տեսնել:

Նիւթս անպատ է, բայց սա այժմ այսքանը բաւ համարելով, կը փութամ ձեր արժանապատուութեան մատուցանել որդիական յարգանաց հաւատարմը: (*)

Ա. ՊԱՆԵՆ

(*) ԾԱՆՕԹ. ԽՄԲ. — Պատո՞ Տիար Պալեան, հիմակ է որ գտած եւ մեղր առնելու ծաղիկը և գիւղ հարցնելու յարմար մարդը: Բանի որ գուռ կը կարծես թէ մէկու մը հետ գործ ունիս, մենք փութով ապահովե՞ք զքեզ, որ քու գրածներէդ և ոչ մէկը պիտի կրնայ հասնիլ նա. մեզք որ աւագուտը ո՛վասիս վերածելու համար պարագ յոգնութիւն յանձն կ'առնես:

Ս. Զ. Գ. Ս. Ն. ԼՈՒՐԵՐ

Վսեմ. Արքայա՛մ Պէյ Բարթոլոյ առաւտածեանութեամբ կատարուող նորոգութիւնը փութով առաջ կը տարուին Աղեքսանդրիոյ Ս. Պօղոս Պետրոս եկեղեցիին մէջ և ի մօտայ բազմք պիտի ունենանք այդ սրբուն աղօթարանը Բրիտանի հարսին պէս շրջաբերէն պճնազարդուած տեսնելու:

Անցեալ երկուշաբթի գիշեր ընդհիմազի խմբակին նախաձեռնութեամբ դու մարուած միթիկի պիտի կրնար շատ ծանր հեռուանքներ ունենալ եթէ Վսեմ. Արքայա՛մ պէյ Բարթոլոյ միթիկին շէնքին մօտերը չի գտնուէր կանխահոգ զգուշութեամբ: Ժողովուրդին մէկ մասը արգար զայրոյթով լեցուած էր աղմկայոյց խմբակին դէմ և պէտք եղած դասը տուաւ արգէն որոց որ արժանի էր. կը վարցուէր սակայն որ կարգապահութիւնը խանգարուէր, ինչպէս արգէն քան վայրկեանի չափ խանգարուեցաւ, և մեծ համեմատութիւններ ստանար, եթէ Վսեմ. Արքայա՛մ պէյ Բարթոլոյ իր սովորական պազարիւնութեամբ և ալալըութեամբն ու հայրական յորդորներով վտանգին առաջը չ'առնէր:

Ն. Վսեմութեան այս ընթացքը ընդհանուր գոհունակութեան արժանացած է իրաւամբ:

Միջազգային դատարանի վերաբնիչ Ատենին խորհրդական Վսեմ. Կարապետ պէյ Բէյիլեան, նոյն դատարանին նախնական ճիւղին անգամ Վսեմ. Արթիւն պէյ և Տիկին Արթիւն պէյ Բէյիլեան, անցեալ օրբաթ օրուան Մէնսապի Սեմեկայ շոգեանով եւրոպա ուղևորեցան:

Նոյն շոգեանով Եւրոպա ուղևորեցաւ Սեբաստիոյ վիճակին հայ-կաթոլիկներու առաջնորդ Գերազայճաւը:

Այս շաբաթ օր Բօր-Սոյլիտի ճամբով Եւրոպա կ'ուղևորի հանրածանօթ գործարանատէր և վաճառական պանուալուք Կարապետ Էֆենդի Մեղրեան, ընկերակցութեամբ Էքսթրէ — Սէնտիք Տիար Լեւոն Մըկրտչեանի:

բանտին զրանք առջև կ'ապաւնէր: Բաշակ Տահապիկովը Թանթա մեկնեցաւ:

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ի Ե Ր

ԹՈՒՆՈՒԶԻ ՊԵՏԻՆ ՄԱՀԻ ԵՒ ՍՈՒԼԹԱՆԸ. — Գիտենք որ թուրք կառավարութիւնը ընդունած չէ Պարտի գահագիրը որ թուրք ֆրանսայի դիւրիխանութեան տակ կը գնէ: Երբոր Պէյին մահանալու լուրը Պօլիս հասաւ, գրաքննութիւնը խիստ հրամաններ տուաւ մամուլին որ ո՛ւր է անկարողութիւն մը չ'ընէ ֆրանսական գերիշխանութեան մասին:

Պ. Գոնսթան Անատուրի եղբրքը զօսանաւով կը շրջէր մահուան լուրը հասած պահուն. շաբաթ, Պօլիս վերադառնալուն պաշտօնապէս Բ. Գրան ծանուց պէյին մահը և յաջորդին անուանումը:

Միջազգայի մը կ'օգտուէր բայց բան մը չ'պատահեցաւ:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Բարիկ 25 Յունիս. — Պ. Լուպի իր ցարակցութիւններ յայտնեց Անգլիական ղեկավարութեանը քաղաքին նիւսնորութեանը համար:

ՄԿՐՏԻՉ Տ. ԱՄԻՐԵԱՆ

ՆՈՐՈՒԹ ԵՒ ԲՅԵՐՈՒ ՄՈՒՐՈՒ

Ամերիկեան դրոսեանք

Պագար Մուրուր թիւ 35, Յոյն գրախմբանին ղիմաց:

Այս անգամ Աղեքսանդրիայէն Գահիրէ հաստատուած ըլլալով, պատիւ ունի ծանուցանել արգոյ հանրութեան թէ՛ Մխարիկ եւ Սքեմբիլի գրութեամբ բողոքէն եւ մեծաբազ զգեստներուն բիծերը կը մարքէ եւ կ'անհետացնէ, ասիէ զատ՝ նորի կը վերածէ մեծաբազ եւ անգործածիկ նպատուած հագուստները:

Անոնք որ իրենց արթնքաւոր մէկ հագուստը արատաւորուած ըլլալուն պատճառաւ մէկ կողմ գրած եւ անգործածիկ կը համարին, կըրնան գիտնէ Պագար Մուրուրի թիւ 35 խանութը, 803

ԳԱՌԻԿ ՄԿՐԵԱՆ

ԿԱՀԱԳՈՐԾ

Պագար Մուրուր Պրաւալիս եղբայր Ենր շեմիկ մէջ թիւ 12

Վերջերս կրեալէն հոս փոխադրուած եւ հաստատուած լինելով, կը յայտարարէ ամէն անոնց՝ որ պէտք ունին յանձնարարելու առաջին վերաբերեալ ամենէն ընտիր կանգնելու իրենց զանազան տեսակներով ու եւրոպական ճաշկերպ, ինչպէս են պիւֆիներ, սալմուս-սալմուս, վիթիներ, պանիներ, գօստիներ, գազիներ, պիպիթներ, գրասեղաններ, թիկնորոններ՝ հաճին ղիմել վերաբերեալ թիւ խանութին, օքր պատրաստուած կահեղէններն թէ՛ ի Պօլիս, եւ թէ՛ ուրիշ կարեւոր քաղաքներու եւ մասնաւորապէս ի Գահիրէ-քիչ մասնակի մէջ-համբաւ ստացած եւ գնահատուած են:

Գիտնու չափաւորութիւն եւ ճշտապահութիւն:

